ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2022թ. պետական բյուջեի կատարման հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ









2022 թվականին Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ, ՀՆԱ-ի 108.1% դեֆլյատորի պարագայում, կազմել է 8 տրիլիոն 496.8 մլրդ դրամ՝ պետական բյուջեով 2022 թվականի համար ծրագրված 7 տրիլիոն 869.4 մլրդ դրամի (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 104.6), ՄԺԾԾ-ով 2022 թվականի համար ծրագրված 7 տրիլիոն 570.8 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 104.6%) և 2021 թվականի 6 տրիլիոն 983 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 106.9%):

2022 թվականին ՀՀ տնտեսությունում արձանագրվել է 12.6 % աճ՝ նախապես պետական բյուջեով ծրագրված 7% ՀՆԱ-ի իրական աճի, 2022-2024թթ. ՄԺԾԾ-ով ծրագրված 5.2% ՀՆԱ-ի իրական աճի, 2021 թվականի 5.7% աճի դիմաց: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի այս ցուցանիշով ԵԱՏՄ երկրների և Վրաստանի հետ համեմատությամբ գերազանցում է բոլորին: 2022թ. Վրաստանում ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 10.1%, Ղրղզստանում արձանագրվել է ՀՆԱ-ի 7% իրական աճ, Ղազախստանում՝ 3.2%, իսկ Ռուսաստանի Դաշնությունում՝ և Բելառուսում արձանագրվել է ՀՆԱ-ի անկում համապատասխանաբար 2.1%-ով և 4.7%-ով:

2022 թվականին Հայաստանում ՀՆԱ-ի աճին ամենամեծ նպաստումն ունեցել է ծառայությունների ճյուղը՝ 9.3%-ային կետ, 2021 թվականի 4.0%-ային կետի դիմաց:

Արդյունաբերության նպաստումը կազմել է 1.3%-ային կետ՝ 2021 թվականի 0.8 %-ային կետի դիմաց:

Շինարարության ճյուղի նպաստումը կազմել է 1.2 %-ային կետ՝ 2021 թվականի 0.2 %-ային կետի դիմաց:

Զուտ անուղղակի հարկերը ՀՆԱ-ի իրական աճին նպաստել են 0.9 %-ային կետով, ինչպես և 2021 թվականին:

2021 թվականին գյուղատնտեսության ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա այս անգամ ևս եղել է բացասական՝ -0.1 %-ային կետ՝ 2021 թվականի -0.2%-ային կետի դիմաց:

*Աղբյուրը Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2021 թվականի և 2022 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույցներ:

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2022 թ. կազմել է 49.7%, որը 15.2 %-ային կետով բարձր է ծրագրված մակարդակից և 13.5 %-ային կետով ավել է 2021 թ. ցուցանիշից: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 51.9 %՝ 6.5%-ային կետով ավել քան ծրագրված էր և 8.4%-ային կետով ավել քան 2021թ. էր: Արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2022թ. կազմել է -2.1%՝ 8.8%-ային կետով բարելավելով ծրագրված ցուցանիշը և 6.2%-ային կետով բարելավելով 2021թ. փաստացի ցուցանիշը:

2022 թ. 2021թ. նկատմամաբ 2.8%-ային կետով բարելավվել է ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով -0.9%, 2021 թվականի -3.7%-ի դիմաց:

2022թ. արտաքին ապրանքաշրջանառությունը կազմել է 14128.7 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 68.6%-ով: Արտահանումն աճել է 77.7% ով՝ կազմելով 5360.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 63.5%-ով և կազմել 8768.7 մլն ԱՄՆ դոլար:

Միջին գնաճը 2022թ.-ին արձանագրվել է 8.6%-ի մակարդակում՝ պետական բյուջեով ծրագրված 5.3%-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 4.1 %-ի և 2021թ.՝ 7.2 %-ի դիմաց: Իսկ գնաճը ժամանակաշրջանի վերջում 2022թ. կազմել է 8.3%՝ պետական բյուջեով ծրագրված 5.6%-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 4.0 %-ի և 2021թ.՝ 7.7%-ի դիմաց:

2022թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են 2 տրիլիոն 63.1 մլրդ դրամ, ինչը կազմում է 2022թ. համար հաստատվածի 105.9 %-ը, ճշտված մակարդակի 100.2%-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 113.4 %-ը, իսկ 2021թ. մակարդակից ավել է 22.5 %-ով կամ 379.3 մլրդ դրամով:

2022թ.-ին պետական բյուջեի ծախսերը կազմել են 2 տրիլիոն 242.6 մլրդ դրամ, ինչը կազմում է 2022թ. համար հաստատված մակարդակի 102.7%-ը, 2022թ. ճշտված ցուցանիշի 98%-ը,ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 112.1%-ը և գերազանցում է 2021թ. մակարդակը 11.9%-ով կամ 238.3 մլրդ դրամով:

2022թ. պետական բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 179.5 մլրդ դրամ, ինչը 2022թ. հաստատված մակարդակից պակաս է շուրջ 24%-ով կամ 56.8 մլրդ դրամով, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշին զիջում է 1.2%-ով, իսկ 2021թ. փաստացի մակարդակից պակաս է շուրջ 44%-ով կամ 141 մլրդ դրամով:

2022թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.3%՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 0.5 %-ային կետով պակաս, ՄԺԾԾ-ով կանխատեսվածից 0.3%-ային կետով ավել և 2021 թվականի մակարդակից 0.2%-ային կետով ավել:

ԱԺԲԳ









2022թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 26.4%՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 1.4%-ային կետով պակաս, ՄԺԾԾ-ով կանխատեսվածին հավասար և 2021թ. մակարդակից 2.3%-ային կետով պակաս:

2022թ. պետական բյուջեի պակասուրդ(դեֆիցիտ)/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է -2.1%՝ 0.7 %-ային կետով բարելավելով պետական բյուջեով ծրագրված մակարդակը, 2.5%-ային կետով բարելավելով 2021թ. փաստացի մակարդակը և 0.3 %-ային կետով բարելավելով ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակը:

2022թ. պետական բյուջեի եկամուտները փաստացի ձևավորվել են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 926 մլրդ դրամ, որը կազմում է 2022թ. հաստատված մակարդակի 104.5 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածի 111.1%-ը և 2021 թվականի ցուցանիշից ավել է 21.4%-ով կամ 339.1 մլրդ դրամով,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 15 մլրդ դրամ, որը 2022թ. ծրագրային ցուցանիշից պակաս է 64.1%-ով, ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից՝ 43.4%-ով, իսկ 2021թ. փաստացի մակարդակից ավել է 21%-ով,
- այլ եկամուտներց՝ 122.1 մլրդ դրամ, որը կազմում է 2022թ. հաստատված մակարդակի 196.6%-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածից ավել է 106.3%-ով, 2021թ. ցուցանիշից ավել է 44.3%-ով կամ 37.5 մլրդ դրամով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2022թ. կազմել է 22.7%, որը 0.7%-ային կետով պակաս է պետական բյուջեով ծրագրված ցուցանիշից, 0.2%-ային կետով պակաս է ՄԺԾԾ-ով ծրագրված ցուցանիշից և հավասար է 2021թ. փաստացի մցուցանիշին:

2022 թվականին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 679.6 մլրդ դրամ, գերազանցելով 2021թ. ցուցանիշը 22.2%-ով, 2020թ. ցուցանիշը՝ 44.1%-ով և 2019թ. ցուցանիշը՝ 43.3%-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 127.5 մլրդ դրամ՝ գերազանցելով 2021թ. ցուցանիշը 12.7%-ով, 2020թ. ցուցանիշը՝ 3 %-ով, հավասարվելով 2019թ. մակարդակին,
- շահութահարկից մուտքերը կազմել են 222.8 մլրդ դրամ՝ գերազանցելով 2021թ. ցուցանիշը 40.5%-ով, 2020թ. ցուցանիշը՝ 49.7%-ով և 2019թ. ցուցանիշը՝ 22.9%-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 474.8 մլրդ դրամ՝ գերազանցելով 2021թ. ցուցանիշը 11.4%-ով, 2020թ. ցուցանիշը՝ 15.4%-ով և 2019թ. ցուցանիշը՝ 15.8%-ով,

ԱԺԲԳ









- մաքսատուրքերից մուտքերը կազմել են 56.7 մլրդ դրամ՝ 2021թ. ցուցանիշին զիջելով 33.1%-ով, 2020թ. ցուցանիշին՝ 17%-ով, 2019թ . ցուցանիշին՝ 59.6%-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 95.9 մլրդ դրամ՝ 2021թ. ցուցանիշին գերազանցելով 53%-ով, 2020թ. ցուցանիշին՝ 80.6%-ով և 2019թ. ցուցանիշին՝ 64.5%-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 40.7 մլրդ դրամ՝ 2021թ. ցուցանիշին գերազանցելով 25.6%-ով, 2020թ. ցուցանիշին՝ 53%-ով և 2019թ. ցուցանիշին՝ 40.3%-ով,
- նպատակային սոցիալական վճարներից մուտքերը կազմել են 64,5 մլրդ դրամ, 2021թ. ցուցանիշին գերազանցելով 50%-ով, 2020 թ. ցուցանիշին՝ 160.1%-ով և 2019թ. ցուցանիշին՝ 244.9%-ով,
- պետական տուրքերից մուտքերը կազմել են 106.8 մլրդ դրամ՝ 2021 թ. ցուցանիշին գերազանցելով 59.6 %-ով, 2020թ. ցուցանիշին՝ 218.8 %-ով և 2019թ. ցուցանիշին՝ 132.7%-ով,

2022թ. պետական բյուջի ծախսերի 83%-ը կամ 1 տրիլիոն 862.2 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, որոնք հաստատված ցուցանիշը գերազանցում են 13.9%-ով, 2021թ. փաստացի մակարդակը գերազանցում են 4.1%-ով և 2020թ.-ինը՝ 11.6%-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 380.4 մլրդ դրամ, որը հաստատված ցուցանիշը գերազանցում է 11.3%-ով, 4.9%-ով պակաս ճշտված մակարդակից, 75.9 %-ով ավել է 2021թ. փաստացի մակարդակից: Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2022թ. կազմել են 389.1 մլրդ դրամ՝ 13.8%-ով ավել հաստատված մակարդակից, 78.2%-ով ավել 2021թ. փաստացի մակարդակից,

2022թ. պետական բյուջեի ծախսերի՝
- 18.2%-ը կամ 407.4 մլրդ դրամը տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Կատարողականը հաստատվածի նկատմամբ կազմում է 94.7%, ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 98.2 % և 2021թ. համեմատ ավել է 7%-ով,
- 7.8%-ը կամ 175.8 մլրդ դրամը տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին: Կատարողականը հաստատվածի նկատմամբ կազմում է 83.1%, ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 93.6% և 2021թ. համեմատ ավել է 17.8%-ով,

ԱԺԲԳ









Կետագծերով ներկայացված են պետական բյուջեով ծրագրված մակարդակները

- 21.4%-ը կամ 480.4 մլրդ դրամ տրամադրվել է պաշտպանության բնագավառին: Կատարողականը հաստատվածի նկատմամբ կազմում է 128.4%, ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 99.9% և 2021թ. մակարդակից ավել է 43%-ով,
- 8.8%-ը կամ 196.9 մլրդ դրամը տրամադրվել է հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին, որը հաստատված ցուցանիշից ավել է 14.7%-ով, ճշտված ցուցանիշից պակաս է 2.8%-ով, իսկ 2021թ. մակարդակը գերազանցում է 23.1%-ով,
- 0.3%-ը կամ 6.8 մլրդ դրամը տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը: Կատարողականը հաստատվածի նկատմամբ կազմում է 85%, ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 81.2% և 2021թ. մակարդակից ավել է 13.3%-ով,
- 0.42%-ը կամ 9.8 մլրդ դրամը տրամադրվել է բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, ինչը հաստատված ցուցանիշից պակաս է՝ 15.5%-ով, ճշտված ցուցանիշից պակաս է 11.3%-ով , իսկ 2021թ. փաստացի մակարդակին գերազանցում է 3.2 %-ով,
- 6.3%-ը կամ 142.2 մլրդ դրամ տրամադրվել է առողջապահությանը, ինչը հաստատված ցուցանիշը գերազանցում է 16.1%-ով, ճշտված ցուցանիշից պակաս է 1.3%-ով և 2021թ. փաստացի մակարդակից պակաս է 11.4%-ով,
- 37.4%-ը կամ 614 մլրդ դրամը տրամադրվել է սոցիալական պաշտպանությանը, որը կազմում է հաստատված ցուցանիշի՝ 105.7%-ը, ճշտված ցուցանիշի՝ 98.9%-ը և 2021թ. փաստացի մակարդակի՝ 99.1%-ը,
- 7.4 %-ը կամ 165.4 մլրդ դրամ տրամադրվել է կրթությանը, որը կազմում է ճշտված պլանի 96.9%-ը, հաստատված ցուցանիշի՝ 85.7%-ը, իսկ 2021թ. փաստացի ցուցանիշից ավել է 10.9%-ով,
- 1.96%-ը կամ 43.9 մլրդ դրամը տրամադրվել է հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին: Արդյունքում, ինչը հաստատված ցուցանիշից ավել է 33.8%-ով, ճշտված ցուցանիշից պակաս է՝ 2.4 %-ով, իսկ 2021թ. մակարդակը գերազանցում է 44.4%-ով:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 186.7 մլրդ դրամ, որը 16%-ով պակաս է ծրագրված մակարդակից, և 5.5%-ով պակաս է 2021թ. համապատասխան ցուցանիշից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2 տրիլիոն 536.7 մլրդ դրամ, որը 27.4%-ով պակաս է ծրագրված մակարդակից, իսկ 2021 թ. փաստացի ցուցանիշից պակաս է 20.5%-ով,
- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 1 տրիլիոն 650 մլրդ դրամ, որը ծրագրված մակարդակից ավել է 10.5 %-ով, իսկ 2021 թվականի փաստացի մակարդակը գերազանցում է 33.3%-ով,

ԱԺԲԳ









- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կազմել է 10 միլիարդ 637.7 մլն, որը 15.3%-ով ավել է 2021թ. փաստացի մակարդակից,

- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 6 մլրդ 445.4 մլն ԱՄՆ դոլար, որը 3.1%-ով պակաս է 2021թ. փաստացի մակարդակից,

- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 4 մլրդ 192.3 մլն ԱՄՆ դոլար, որը 62.7%-ով ավել է 2021թ. մակարդակից,

- ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 969.7 մլրդ դրամ, որը 13.3%-ով պակաս է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 16.3 %-ով պակաս է ծրագրված մակարդակից և 5.7%ով պակաս է 2021 թվականի մակարդակից,

- ՀՀ ԿԲ արտաքին պարտքը կազմել է 217 մլրդ դրամ, որը ծրագրված մակարդակից պակաս է 11.4%-ով, իսկ 2021թ. ցուցանիշից քիչ է 1.3%-ով,

- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 319.7 մլրդ դրամ, որը 28.6%-ով պակաս է ծրագրված մակարդակից, 26.3%-ով պակաս է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից և 22%-ով պակաս է 2021թ. համապատասխան ցուցանիշից,

- ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 650 մլրդ դրամ, որը 15.1%-ով ավել է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 10.5%-ով ավել է ծրագրված մակարդակից և 33.3%-ով գերազանցում է 2021 թվականի փաստացի մակարդակը:

Կետագծերով ներկայացված են պետական բյուջեով ծրագրված մակարդակները

ԱԺԲԳ





2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 49.3%, որը 14.1%-ային կետով պակաս է ծրագրված մակարդակից և 2021 թվականի համապատասխան ցուցանիշից, իսկ 2020 թվականի համապատասխան ցուցանիշից պակաս է 18.1%-ային կետով,

- ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 29.9%՝ 14.5%-ային կետով պակաս քան ծրագրվել էր պետական բյուջեով, 158%-ային կետով պակաս քան 2021 թվականին էր և 21.3 %-ային կետով պակաս քան 2020 թվականին էր,

- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է՝ 2022 թվականին արձանագրվել է 46.7%-ի մակարդակում, որը 13.5%-ային կետով քիչ է ծրագրված մակարդակից, 13.6%-ային կետով քիչ է 2021 թվականի փաստացի մակարդակից և 16.8%-ային կետով քիչ է 2020 թվականի համապատասխան ցուցանիշից:





ԱԺԲԳ

ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ (%)



ՀՀ կառավարության ներքին պարտք/ՀՆԱ (%)



2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 27.3%՝ 14 %-ային կետով պակաս քան ծարագրվել էր պետական բյուջեով, 15.3%-ային կետով պակաս քան 2021 թվականին էր և 20%-ային կետով պակաս քան 2020 թվականին էր;
- ՀՀ կառավարության ներքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 19.4%՝ 0.4 %-ային կետով ավել քան ծարագրվել էր պետական բյուջեով, 1.7%-ային կետով ավել քան 2021 թվականին էր և 3.3%-ային կետով ավել քան 2020 թվականին էր;



ՀՀ կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է նաև ՀՀ կառավարության պարտքի կառուցվածը, ըստ որի ՀՀ կառավարության ներքին պարտքը պետք է լիներ առնվազն 25 %:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը ՀՀ կառավարության պարտքի մեջ կազմել է 41.6%, 10.1%-ային կետով ավել քան ծրագրված էր, իսկ 2021 թվականի և 2020 թվականի փաստացի մակարդակները գերազանցում է համապատասխանաբար՝ 12.1 %- ային կետով և 16.1%- ային կետով: Սա փաստում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարումն իրականացվում է սահմանված ուղենշային ցուցանիշների տիրույթում:

*Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ 2018-2022թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, 2022թ. և 2023թ. պետական բյուջեները, 2022-2024թթ. ՄԺԾԾ-ն, ՀՀ վիճակագրական կոմիտեի ու ՀՀ ֆինանսների նախարարության կայքի տվյալները, ինչպես նաև Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2023 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների վերաբերյալ զեկույցը: